<<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիր
Ռեֆերատ-հետազոտական աշխատանք

Հեռավար կրթություն

Թեմա՝
# Պիրախա ցեղը և երջանկության գաղտնիքը

Սովորող՝ Ռուբեն Առաքելյան
Ղեկավար՝ Լիլիթ Յախինյան

# Պիրահա ցեղը

Բրազիլիայում, որտեղ կան շատ վայրի կապիկներ, ապրում են հնաբնակ ցեղեր, որոնց կենսակերպը կարող է շոկի մատնել ժամանակակից մարդուն: Նման ժողովուրդներից են ***Պիրահաները***, որոնք չեն մտածում ապագայի մասին, չեն հավատում Աստծուն ու չգիտեն՝ ինչ է ամոթը: Այս մասին գրում է kulturologia.ru-ն: Պիրահա ցեղի մասին տեղեկություններ է կազմել քրիստոնյա քարոզիչ Դենիել Էվերեթը, որը 30 տարի առաջ հոգևոր առաքելությամբ ուղարկվել էր Բրազիլիա և նրանց հետ ապրել է 7 տարի: Այդ ընթացքում նա մանրամասն ուսումնասիրել է Պիրահաների լեզուն, մշակույթը, ծանոթացել ավանդույթներին և շատ բան իմացել նրանց աշխարհայացքի մասին:

Այդ հնաբնակների համար տիեզերքը անտառ է, որտեղ նրանք ապրում են, նրանք չեն արձանագրում ժամանակի ընթացքը՝ նրանց մոտ պարզապես բացակայում են ներկան, անցյալն ու ապագան: Նրանց համար չկա նաև սնվելու ու քնելու ժամ՝ ուտում են, երբ սոված են:

Նրանց մշակույթում չկա պատկերացում թվերի ու հաշվարկի մասին: Պիրահաների թիվը այսօր 700 է: Նրանք չունեն ամոթի ու մեղքի զգացում: Մեծահասակներն ու փոքրերը չեն նեղացնում միմյանցից ու չեն չարանում իրար դեմ:

**Նկարում ՝ Ամազոնի ջունգլիներում բնակվող վայրի հնդկացիների ցեղ Պիրահան:**

Հնդկացիների այս ցեղը ապրում է Բրազիլիայի Ամազոնաս նահանգի Մայիցի գետի ափին: Նրանք հայտնի են իրենց լեզվով: Պիրահանը ամբողջ աշխարհում շուրջ 6000 խոսակցական լեզուներից ամենահազվադեպ հանդիպողներից է: Կրողների քանակը տատանվում է 250-380 սահմաններում: Լեզուն զարմանալի է նրանով, որ

չունի թվականներ, կան միայն «մի քանի» կամ «շատ» հասկացությունները: Մեկ բառը, որը արտահայտվում է տարբեր հնչերանգներով մեկ կամ երկու բառերի փոխարեն է օգտագործվում: Հենց այդ բառն էլ կարող է նշանակել «մոտավորապես մեկ» և «ոչ այդքան շատ»:

***Օրինակ, եթե մայրը ունի 5 երեխա. նա չի ասում, որ ունի հենց հինգ երեխա, այլ ասում է, որ ունի մի քանի կամ շատ երեխաներ: Թվային պատկերացումները բացակայում են:***

1.բայերը քանակի և դեմքի հետ կապված չեն փոփոխվում,

2.նրանք չունեն բառեր, որոնք բնորոշում են գույները,

3.լեզուն բաղկացած է 8 բաղաձայն և 3 ձայնավոր տարերից:

Թվականների բացակայության պատճառով պիրահաները չեն կարողանում հաշվել և պարզագույն մաթեմատիկական խնդիրներ լուծել: Նրանք ի վիճակի չեն գնահատելու օբյեկտների քանակը, եթե դրանք երեքից ավելին են: Միևնույն ժամանակ չի նկատվել ինտելեկտի նվազում: Հոգեբանների և լեզվաբանների կարծիքով նրանց մտածողությունը արհեստականորեն սահմանափակվում է լեզվի առանձնահատկություններով:

Պիրահաները աշխարհի ստեղծման հետ կապված լեգենդներ չունեն, բայց կա մի կարևոր առանձնահատկություն, շատ խիստ տաբուն արգելում է նրանց խոսել այն ամենի մասին, ինչը իրենց սեփական փորձի մասը չի կազմում: Չնայած այս ամենին, նրանք բավականին շփվող են և մի քանի հոգանող խմբերով կարողանում են կազմակերպված գործողություններ իրականացնել:

Ըստ լեզվաբանների Պիրահա տղամարդիկ կարողանում են պարզագույն պորտուգալերեն հասկանալ և խոսել որոշ սահմանափակ թեմաների շուրջ: Իսկ կանայք այդ լեզվի մասին պատկերացում չունեն և չեն օգտագործում հաղորդակցության ժամանակ: Հետաքրքիր է, որ պիրահանը ունի որոշ բառեր,

որոնք վերցրել են այլ լեզուներից՝ հիմնականում պորտուգալերենից: Օրինակ՝ գավաթ, բիզնես:
Այս ցեղի հետ կապված մի քանի այլ հետաքրքիր փաստեր կան.

1.նրանք չունեն ստիպողականություն: Նրանք չեն ասում այլ մարդկանց ինչ անել: Կարծես այնտեղ ընդհանրապես չկա սոցիալական հիերարխիա, ֆորմալ առաջնորդ:

2.նրանք չունեն պատկերացում աստվածների մասին, սակայն հավատում են հոգիներին, որոնք երբեմն հովազների, ծառերի և մարդկանց տեսքեն ընդունում:

3.տպավորություն է, որ նրանք չեն քնում: Կարող են 15 րոպե կամ ամենաշատը երկու ժամ քնել մեկ օրվա ընթացքում: Շատ հազվադեպ են ողջ գիշերը քնում:

4. Նրանք չունեն անցյաի մասին հիշողություններ: Ամենահին հիշողությունը ցեղի ամենամեծ անդամի ունեցած հիշողությունն է, ում մահից հետո դրանք ի չիք կդառնանա:

5. Կանայք չեն նեղանում իրենց ամուսիններից, ովքեր կապվում են այլ պիրահացի կնոջ հետ, ասելով, որ <<ուղղակի ժամանակը եկել է, և մենք պիտի բաժանվենք>>

6. Եթե ցեղը օրվակերկուր չի գտնում, չի մտահոգվում ասելով, որ <<այսօր չկերանք, վաղը կուտենք>>

7. Քունը համարվում է վտանգավոր, քանի որ օձերը կարող են հարձակվել:

8. Վերոնշյալ միսիոներ Դենիել Էվերեթը պիրահա ցեղում անցկացրած տարիներից հետո հրաժարվել է իր կրոնից, ասելով, որ երջանկությունը չիմացության մեջ է:

## Եզրակացություն

Ասեմ իմ կարծիքը։Պիրահա ցեղը ունի յուրահատուկ լեզու։

Լեզուն մշակույթի արտացոլումն է, այլ ոչ թե հակառակը։ Եթե ձեր մշակույթը որևէ բանի մասին պատկերացում չունի, ապա, իհարկե, ձեր լեզուն դրա համար բառեր չի ունենա։

Մյուս յուրահատկությունը նրանց կենտրոնացումն է այստեղ և հիմա։ Նրանք նույնիսկ ծագում չունեն, կամ չգիտեն դրա մասին, ու չեն էլ ուզում իմանալ։

Երջանիկ են,քանի որ չունեն հիշողություն և ամոթի զգացում։ Իմ կարծիքով ,եթե մենք էլ չունենսինք այս երկու զգացողությունները,մենք էլ շատ երջանիկ կլինեինք։ Գուցե հիմա մեր օրերում շատերը ուզենային այսպես ապրել։ Պիրահաները բացեցին մեր առջև երջանկության և անհոգության իրենց գաղտնիքը։